

*Հաստատված է Հայաստանի Հանրապետության
Վիճակագրության պետական խորհրդի
07 դեկտեմբերի 2015թ. թիվ 39- Ա որոշմամբ*

Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԼՐԱՑՄԱՆ



ԵՐԵՎԱՆ – 2016

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Հետազոտությունն ընդգրկում է հանրապետության ողջ տարածքը, իսկ հետազոտվող միավորը պատահականության սկզբունքով ընտրված **մասնավոր** տնային տնտեսություններն են (S/S)՝ բացառելով ծերանոցներում, կալանավայրերում և այլ ինստիտուցիոնալ S/S-ներում բնակվողներին:

Հետազոտությունն իրականացվում է հետևյալ գործիքների միջոցով.

- S/S (հիմնական և պահուստային) ցանկ, ընտրանքի հաշվետվություն (այսուհետ՝ S/S ցանկ).
- Աշխատուժի հետազոտության հարցաթերթ (ԲԱԺԻՆ Ա- Ձ):

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հարցազրուցավարը պարտավոր է.

▪ S/S այցի ժամանակ ներկայանալուց հետո բացատրել այցի նպատակը՝ անհրաժեշտության դեպքում պատասխանելով այցելությանն առնչվող հարցերին:

▪ Հարցաթերթում առաջադրված հարցերի պատասխանները պետք է ուղղակիորեն ստացվեն անմիջապես հարցվողից, տարբեր պատճառներով նրա հետ հարցազրույց վարելու անհնարինության դեպքում՝ S/S չափահաս այն անդամից, ով կկարողանա սպառիչ պատասխան տալ հարցերին, այլապես պետք է ճշտել այն օրը և ժամը, երբ հարցվողը տանը կլինի և կկարողանա մասնակցել հարցմանը:

▪ Հարցերն ուղղել հարցվողին ճիշտ այնպես, ինչպես գրված են հարցաթերթում և չմեկնաբանել.

▪ Հարցաթերթը լրացնելիս անվերապահորեն հետևել հարցերի ճիշտ հաջորդականությանը՝ ուշադրություն դարձնելով.

- հարցից և դրա հնարավոր պատասխան(ներ)ից հետո դրված սլաքին, անցմանը, որոնք ցույց են տալիս, թե ընտրված պատասխանից հետո հաջորդ ո՞ր հարցին պետք է անցնել: Սլաքի բացակայության դեպքում անհրաժեշտ է անցնել անմիջապես հաջորդ հարցին.

- հարցազրուցավարին ուղղված **հատուկ** հրահանգներին.

- փակագծերով և (կամ) շեղատառերով գրառումներին:

▪ Հարցաթերթը լրացնել ընթեռնելի ձեռագրով և առանց հապավումների.

▪ Հարցի հնարավոր պատասխաններից «այլ (*նշել*)» տարբերակն ընտրելու դեպքում՝ պատասխանը նշել նաև բառերով.

▪ Ուշադրություն դարձնել այն հարցերին, որոնք թույլ են տալիս գրանցել երկու պատասխան, մնացած դեպքերում նշել միայն մեկ պատասխան.

▪ Միսալ լրացնելու դեպքում ջնջել գծիկով և նշել ճիշտ պատասխանը.

▪ Որևէ հարցի կամ հարցերի պատասխանելու հրաժարման դեպքում տվյալ S/S անդամի սյան համապատասխան տողում նշել «99»:

▪ **Հարցազրույցն ավարտելուց հետո շնորհակալություն հայտնել:**

SS (ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ) ՑԱՆԿ, ԸՆՏՐԱՆՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

▪ Ընտրանքի հաշվետվությունը բաղկացած է S/S -ների **հիմնական** և **պահուստային** հասցեներից: Հիմնական հասցեների յուրաքանչյուր S/S դիմաց պետք է լրացնել «Որոնման արդյունքների» հնարավոր **9** հուշումներից մեկը՝ անկախ S/S -ում հարցում անցկացնելու հանգամանքից: Դրանք են.

1. կայացած հարցում.
2. փակ դուռ՝ S/S-ն հասանելի չէ ՀՀ-ում.
3. փակ դուռ՝ S/S-ն արտերկրում է.
4. հասցեն չի գտնվել / գոյություն չունի.
5. հասցեն օգտագործվում է այլ նպատակով.
6. S/S մերժում.
7. կացարանի (բնակարան, տուն) մուտքը սահմանափակ է.
8. հայերեն հարցումը հնարավոր չէ.
9. չկայացում այլ պատճառով (նշել):

- *Նշվում է, օրինակ՝ 7 օրվա ընթացքում տվյալ հասցե 3 այցից հետո S/S-ում որևէ անդամի չհանդիպելու դեպքում, պայմանով, որ հարևանությանը բնակվող չափահաս տեղեկացված անձից պարզ կդառնա, որ SS-ն սովորաբար բնակվում է տվյալ հասցեում:*

▪ **S/S-ում հարցումը (հարցազրույցը) կայացած է** համարվում, եթե.
- լրացվել է հարցաթերթի ԲԱԺԻՆ Ա-Զ-ն՝ ըստ սահմանված կարգի.
- լրացվել է միայն ԲԱԺԻՆ Ա-Բ-ն, որովհետև S/S-ն բաղկացած է միայն **մինչև 15 տարեկան** կամ **75 տարեկանից բարձր** տարիքի անձ(անց)ից.

▪ **S/S -ում հարցումը կայացած չի** համարվում, եթե S/S հետ հնարավոր չի եղել կապ հաստատել վերը թվարկված **2.-9.** կետում նշված պատճառներից որևէ մեկով:

▪ S/S-ում հարցում չկայանալու վերը թվարկված յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է S/S-ն փոխարինել պահուստային ընտրանքից՝ հարցաթերթի վերնի աջ անկյունում նշելով, օրինակ, «Պ-15», որտեղ Պ-ն նշանակում է «պահուստ», իսկ 15-ը պահուստային հասցեի S/S համարն է, **որը նույնական է հիմնական հասցեի S/S համարի հետ:**

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

ԲԱԺԻՆ Ա.- Բ.

ԲԱԺԻՆ Ա. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- **Ա1.- Ա5.**-ը լրացնել S/S ցանկից:
Պահուստային հասցեից օգտվելու դեպքում Ա2.-ում պետք է նշել հիմնական ընտրանքի S/S համարը, որը կարող է տարբերվել կետ 3.-ի ներքո նշված պահուստային ընտրանքի S/S համարից:
- **Ա6.**-ը լրացնել երկու նիշով (օրինակ՝ 02, 06 և այլն).
- **Ա7.**-ը լրացնել Բաժին Բ-ն լրացնելուց հետո՝ այնուհետև **Բ9.**-ից.
- **Ա8.**-ը լրացնել Բաժին Գ-ում լրացված անդամների թվին համապատասխան:

ԲԱԺԻՆ Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ **F10.-F14.**-ում, **F17-F22.**-ում գրանցել տեղեկություններ S/S բոլոր անդամների վերաբերյալ՝ անկախ տարիքից:

Այն դեպքում, երբ հարցվողը չի կարողանա պատասխանել սյուն F13.- F14. հարցերին (ծննդյան ամիս, տարեթիվ), ծննդյան ամիսը առաջարկվում է նշել 01 կամ 06, իսկ տարեթիվը՝ մոտավորապես:

▪ **F15.**-ը վերաբերում է հարցվողի ձեռք բերած **ամենաբարձր** կրթական մակարդակին և լրացվում է սկսած 6 տարեկանից՝ ուշադրություն դարձնելով S/S անդամի **տարիքային և կրթական մակարդակի հնարավոր համապատասխանությանը:** Այսպես.

Կրթական մակարդակ	Տարիք
1. գրաճանաչ չէ	6 տարեկան և բարձր
2. չունի տարրական	6 տարեկան և բարձր
3. տարրական ընդհանուր	9 և բարձր
4. հիմնական	14 և բարձր
5. միջնակարգ	16 և բարձր
6. նախամասնագիտական (արհեստագործական)	18 և բարձր
7. միջին մասնագիտական	18 և բարձր
8. բարձրագույն (բակլավրիատ, մագիստրատուրա, դիպլոմավորված մասնագետ)	20 և բարձր
9. հետբուհական (ասպիրանտուրա, ինտերնատուրա, օրդինատուրա, դոկտորանտուրա)	22 և բարձր

▪ **F16.**-ում հարցումը կատարել՝ սկսած **15 տարեկանից:**

ԲԱԺԻՆ Գ.- Զ.

Սույն բաժնի նպատակն է **15-75 (ներառյալ) տարեկան** առկա բնակչությանը դասակարգել ըստ տնտեսական ակտիվության **ընթացիկ** կարգավիճակի՝ **զբաղված** կամ **գործազուրկ** կամ **տնտեսապես ոչ ակտիվ:**

ԲԱԺԻՆ Գ.-Զ.-ի հարցերը.

▪ **լրացվում են** S/S-ում **սովորաբար բնակվող** 15-75տ. (ներառյալ) այն անդամների համար, ովքեր.

1. սովորաբար գիշերում / բնակվում են տվյալ հասցեում, անգամ եթե հարցման պահին ժամանակավորապես (**մինչև 3 ամիս**) բացակայել են.

2. գորակոչված են բանակ՝ ժամկետային զինծառայության՝ անկախ բացակայության տևողությունից.

3. մշտապես ներկա են.

4. գտնվել են նախնական կալանքում:

▪ **չեն լրացվում** 15-75տ. (ներառյալ) S/S այն անդամների համար, ովքեր.

- սովորաբար չեն գիշերում / բնակվում տվյալ հասցեում, անգամ եթե հարցման պահին ժամանակավորապես (**մինչև 3 ամիս**) եղել են ներկա.

- տվյալ S/S-ից **3 ամիս և ավելի ժամանակով** բացակայողների համար՝ **բացառությամբ** բանակում գտնվող ժամկետային զինծառայողների:

Բացակա չեն համարվում կարճաժամկետ այցով կամ գործնական նպատակով (օրինակ՝ հյուր, զբոսաշրջություն, գործուղում) բացակայող ՏՏ անդամները:

▪ Հարցաթերթի **ԲԱԺԻՆ Ա.-Բ.**-ի և **ԲԱԺԻՆ Գ.-Զ.**-ի միջև կապն ապահովելու համար **անհրաժեշտ է** լրացման ենթակա (անցումներին համապատասխան) բոլոր բաժիններում գրանցել հարցվող անդամի հերթական համարը (h/h)՝ Բաժին Բ. սյուն 9-ին համապատասխան.

▪ Հարցաթերթի մեկ օրինակը նախատեսված է լրացնել առավելագույնը 5 անդամի համար:

Եթե ՏՏ անդամների թվաքանակը գերազանցում է հարցաթերթում նախատեսված 5-ը, լրացնել լրացուցիչ հարցաթերթ՝ նույնական նշելով «Հարցաթերթի №»-ը և «Մարզը», Բ9-ում «01»-ը դարձնելով «11» և հարցաթերթերը տարբերակելով ա)-ի և բ)-ի:

▪ Հարցերի զգալի մասի համար նախատեսված են հնարավոր պատասխաններ: Հարցվողի կողմից տրված պատասխանը պետք է նշել իր սյան համապատասխան տողում՝ ընտրված պատասխանի **թվային կոդին** համապատասխան:

▪ Հարցաթերթում կան հարցեր, որոնք պահանջում են.

- տեքստային պատասխաններ՝ հարցեր 5, 6, 7, 25, 26, 54, 55, և 56.

- թվային պատասխաններ (չշփոթել թվային կոդի հետ)՝ հարցեր 13, 14, 31, 32, 38, և 39:

▪ **Հետազոտվող ժամանակաշրջանը** հարցմանը նախորդող **վերջին** կամ **անցած օրացուցային շաբաթն** է (երկուշաբթի օրվանից մինչև կիրակի օրը ներառյալ), որը բնութագրում է հարցվողների տնտեսական ակտիվության **ընթացիկ** կարգավիճակը:

▪ Հարցաթերթի **ԲԱԺԻՆ Գ.-Զ** հարցերը վերաբերում են **հարցվողի բացառապես Հայաստանում իրականացվող / իրականացված աշխատանքային գործունեությանը:**

ԲԱԺԻՆ Գ. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

▪ **Գ1. ա) - է)** հարցերը խիստ կարևոր են, որոնց նպատակն է պարզել հարցվողի աշխատանքային / եկամտաբեր գործունեությամբ (**անկախ եկամուտ ստանալու ժամկետից**) զբաղվածությունն **անցած օրացուցային շաբաթվա** ընթացքում, նույնիսկ եթե այդ աշխատանքի կատարման վրա ծախսվել է ընդամենը **մեկ ժամ**: Ի թիվս զբաղվածության ավանդական ձևերի՝ այս հարցի ներքո թվարկված են նաև գործունեության այնպիսի տեսակներ, որոնք հարցվողը, սովորաբար, աշխատանք / զբաղվածություն չի համարում: Օրինակ, **զբաղվածություն է համարվում**, եթե անձը.

- *զբաղվել է իր տնային կամ գյուղացիական տնտեսությամբ՝ արտադրելով բացառապես սեփական սպառման համար, և արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ.*

- *զբաղվել է սեփական տան, բնակարանի կապիտալ շինարարությամբ և այլն:*

- **Գ1.-ի ա) - է)** հարցերն ուղեկցվում են օրինակներով, որոնք հարկ է կարդալ միայն այն դեպքում, եթե հարցվողի համար հարցը հստակ չէ:

▪ **Գ2.-ը** լրացվում է այն անձանց համար, ովքեր, թեև **Գ1. ա)- է)**-ում պատասխանել են «Ոչ», սակայն ունեցել են վարձատրվող աշխատանք կամ սեփական գործ, որը տարբեր պատճառներով ժամանակավորապես դադարեցվել է և **անպայման կվերսկսի**:

▪ **Գ3.-Գ4.-ի** նպատակն է պարզել անցած շաբաթվա ընթացքում հարցվողի աշխատանքից / գործունեությունից բացակայության հիմնական պատճառը և տևողությունը:

- **Զբաղվածություն չի համարվում**, եթե անձը.

- զբաղվել է իր տնային կամ գյուղացիական տնտեսությամբ՝ արտադրելով **բացառապես սեփական սպառման համար, սակայն արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին չի ունեցել տնային տնտեսության սպառման մեջ.**

- զբաղվել է սեփական տան, բնակարանի **մասնակի** շինարարությամբ կամ վերանորոգմամբ.
- վարել է **իր սեփական** տնային տնտեսությունը (օրինակ՝ տան մաքրում, ճաշի պատրաստում, ընտանիքի անդամի խնամք և այլն).
- զբաղվել է կամավոր հասարակական աշխատանքով.
- զբաղվել է մուրացկանությամբ, գողությամբ:

ԲԱԺԻՆ Դ. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

▪ **Մեկից ավելի աշխատանք, գործունեություն ունենալու դեպքում հիմնական է համարվում այն աշխատանքը, գործունեությունը, որտեղ հարցվողը շաբաթվա ընթացքում սովորաբար աշխատում է առավելագույն ժամեր:**

Հավասար ժամեր ծախսելու դեպքում հիմնական համարվում է ավելի բարձր եկամուտ ապահովող գործունեությունը:

▪ **Դ5.-Դ7.-ի** պատասխանները նկարագրել հնարավորինս մանրամասն՝ առանց կրճատումների և հապավումների, այնպես, որ կողավորողը կարողանա ծածկագրել դրանք (օրինակները տե՞ս հարցաթերթում):

▪ **Դ5.-** ում նշվում է հարցվողի **հիմնական զբաղմունքի, պաշտոնի անվանումը**, աշխատանքից բխող պարտականությունների, խնդիրների նկարագրությունը: Օրինակ, նշել ոչ թե ուսուցիչ, այլ՝ ավագ դպրոցի կամ հիմնական դպրոցի ուսուցիչ և այլն:

▪ **Չի կարելի գրել**, օրինակ՝ «վարիչ», «մեքենավար», «օպերատոր» և այլն: Պաշտոնի անվանումը պետք է նշել հետևյալ կերպ. «գրադարանի վարիչ», «մանկապարտեզի վարիչ», «էլեկտրաքարշի մեքենավար», «համակարգչի օպերատոր» և այլն:

▪ Այն դեպքում, երբ պաշտոնի անվանումը, օրինակ «առաջին կարգի մասնագետ», թույլ չի տալիս անմիջապես որոշել զբաղմունքը, անհրաժեշտ է համառոտ բնութագրել կատարած աշխատանքը՝ «տեղեկատվության հավաքագրում, մշակում» և այլն:

▪ Եթե հարցվողը վարում է գյուղացիական տնտեսություն և զբաղված է գյուղատնտեսական մթերքի արտադրությամբ և վաճառքով, ապա պետք է նշել, օրինակ, «զբաղված՝ դաշտային և բոստանային մշակաբույսերի աճեցմամբ», կամ «զբաղված՝ թռչնի մսի և ձվի արտադրությամբ» և այլն: Եթե հարցվողը կատարել է գյուղատնտեսական տարբեր աշխատանքներ և դրանք հնարավոր չէ միմյանցից հստակ սահմանազատել, ապա պետք է նշել «զբաղված բուսաբուծությամբ» կամ «զբաղված անասնաբուծությամբ» կամ «զբաղված բուսաբուծությամբ և անասնաբուծությամբ» և այլն:

▪ Անհատական հիմունքներով, ինքնուրույն գործունեություն իրականացնող անձանց համար նշել արհեստի, մասնագիտության անվանումը, օրինակ՝ «կոշկակար», «կանացի վարսավիր», «ատամնաբույժ», «նկարիչ» և այլն, այլ ոչ թե, օրինակ, «կազմակերպության սեփականատեր»:

▪ **Ղ6.**-ում աշխատավայրի **գործունեության հիմնական տեսակը** նշելիս, եթե հարցվողն աշխատել է միաժամանակ մի քանի գործունեությունն իրականացնող կազմակերպությունում, ապա հիմնական տեսակը պետք է նշել այն ստորաբաժանման գործունեությունը, որում նա փաստացի զբաղված է (աշխատում է):

▪ Այն դեպքում, երբ հարցվողն ինքը տվյալ կազմակերպության գործատուն է, պետք է նշել գործունեության այն տեսակը, որում զբաղվածների թվաքանակը գերակշռում է, կամ՝ որն ինքը կհամարի հիմնական:

▪ Եթե հարցվողն անհատական հիմունքներով մասնավոր անձի տնտեսությունում **կանոնավոր (ոչ միանգամյա բնույթ կրող) զբաղվել է** ծառայությունների մատուցմամբ՝ բնակարանի մաքրություն, երեխայի, հիվանդի խնամք կամ համանման այլ գործունեություն, ապա գործունեության տեսակը նշել՝ «տնային ծառայություններ» կամ «մասնավոր S/S սպասարկում»:

▪ Եթե հարցվողն անհատական հիմունքներով մասնավոր անձի տնտեսությունում **մատուցել է միանգամյա կամ ոչ կանոնավոր բնույթ** կրող ծառայություններ՝ բնակարանի մաքրություն, առողջապահական, բժշկական ծառայություններ, շինարարական կամ այլ ծառայություններ, ապա գործունեության տեսակը մանրամասն նշել ըստ կատարած աշխատանքի բնույթի, օրինակ՝ «հիվանդի ներարկում», «սանհանգույցի նորոգում»:

▪ Գյուղացիական տնտեսությունում զբաղվածների համար նշել, օրինակ՝ «բանջարաբուստանային մշակաբույսերի աճեցում», «անասնապահական կամ անասնաբուծական մթերքների արտադրություն» կամ «բուսաբուծություն և անասնապահություն» և այլն:

▪ **Չի կարելի գրել**, օրինակ.

- «կրթություն», «առողջապահություն», «առևտուր» և այլն.

- «Էս Թի Փի» ՄՊԸ, «ՀՀ ԱՆ», և այլն, ինչը կարող է լինել հավելյալ, բայց ոչ բավարար տեղեկատվություն:

▪ **Ղ7.**-ում հարցվողի որակավորումը / մասնագիտությունը / մասնագիտական հմտությունը նշելիս, պետականորեն հաստատված կրթական ծրագրերով **պետական կամ ոչ պետական կրթական հաստատությունում** կանոնավոր մասնագիտական կրթություն (ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցմամբ) չստանալու, կիսատ թողնելու դեպքում հարկ է նշել այն մասնագիտական հմտությունը, որը ձեռք է բերվել կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպության **կարճաժամկետ մասնագիտական դասընթացի / լրացուցիչ կրթության** կամ **ինքնուս, աշխատանքային գործունեության ընթացքում կուտակած փորձի** կամ **մասնավոր անձի մոտ ուսուցման** արդյունքում: Վերջիններիս բացակայության դեպքում՝ նշել «1»:

- *Ուսումը կիսատ թողած անձը չի համարվում մասնագիտական կանոնավոր կրթություն ունեցող:*

- *Մի քանի մասնագիտության / մասնագիտական հմտության առկայության դեպքում Ղ7-ում պետք է նշել կանոնավոր մասնագիտական կրթությամբ ստացված մասնագիտությունը, դրա բացակայության դեպքում այն մասնագիտական հմտությունը, որը հարցվողը կհամարի հիմնական:*

- *Եթե մասնագիտական հմտությունը ձեռք է բերվել կարճաժամկետ մասնագիտական դասընթացի կամ մասնավոր անձի մոտ ուսուցման արդյունքում և հարցվողը չունի վերջինիս հետ կապված աշխատանքային փորձ, նշել «1»:*

▪ **Դ7ա.-ում.**

- **մասնագիտական կանոնավոր կրթություն** համարվում է պետականորեն հաստատված կրթական ծրագրերով ուսումնառությունը **պետական կամ ոչ պետական** կրթական հաստատությունում (քոլեջ, ուսումնարան, տեխնիկում, ԲՈՒՀ), որի նպատակը **մասնագիտական որակավորման աստիճանի ձեռք բերումն է**, և ավարտը հաստատվում է պետական նմուշի հավաստագրով (դիպլոմ, վկայական, վկայագիր):

- **կարճաժամկետ մասնագիտական դասընթացը / լրացուցիչ կրթությունը** կրթական ծրագրեր իրականացնող **կազմակերպության** կողմից մինչև 6 ամիս տևողությամբ իրականացվող **ոչ ֆորմալ** կրթություն է, որի նպատակը գիտելիքներ, հմտություններ, կարողություններ ձևավորելը, կատարելագործելը կամ արդիականացնելն է: Դասընթացի ավարտից հետո հավաստագրի (վկայական, վկայագիր) առկայությունն անգամ **չի հանդեցնում մասնագիտական որակավորման աստիճանի** շնորհման:

- **ինքնուս, աշխատանքային փորձի / մասնավոր անձի մոտ ուսուցման** արդյունքում ձեռք բերված մասնագիտական հմտությունների ներքո ենթադրվում է մասնագիտական կանոնավոր և լրացուցիչ կրթության բացակայություն, սակայն որոշակի մասնագիտական հմտությունների և կարողությունների առկայություն՝ կյանքի ընթացքում ձեռք բերված փորձի կամ այլ անձի (անձանց) մոտ ուսուցման արդյունքում, ինչը թույլ է տալիս լուծել աշխատանքային պարտականություններից բխող խնդիրներ: Հիմնականում բնորոշ է բանվորական մասնագիտություններին, արհեստներին, ինչպիսիք են՝ կոշկակարությունը, շինարարության ոլորտի զանազան մասնագիտությունները, դերձակությունը, վարսահարդարումը և այլն:

Դ8. - ը նշելու համար առաջնորդվել հետևյալ սահմանումներով.

▪ **Վարձու աշխատողն** անձն է, ով աշխատում է գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում է դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում՝ աշխատավարձ:

*Եթե հարցվողն անհատական հիմունքներով մասնավոր անձի տնտեսությունում **կանոնավոր (ոչ միանգամյա բնույթ կրող) զբաղվել է ծառայությունների մատուցմամբ՝ բնակարանի մաքրություն, երեխայի, հիվանդի խնամք կամ համանման այլ գործունեություն, ապա զբաղվածության կարգավիճակը նշել՝ «վարձու աշխատող՝ բանավոր համաձայնությամբ»:***

▪ **Գործատուն** անձն է, ով ինքնուրույն կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ միասին ղեկավարում է սեփական կազմակերպությունը (բիզնեսը) և աշխատանքների համար մշտապես վարձում է մեկ և ավելի աշխատողներ:

Տնօրենը, կառավարիչը կամ այլ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձն, ով ստանում է աշխատավարձ և ոչ թե եկամուտ գործունեությունից, համարվում է վարձու աշխատող, թեև կարող է և հաճախ էլ կատարում է նույն գործառույթներն, ինչ գործատուն:

▪ **Ինքնազբաղվածն** անձն է, ով զբաղված է եկամտաբեր գործունեությամբ ինքնուրույնաբար՝ առանց աշխատողների ներգրավման կամ եթե նույնիսկ ներգրավում է աշխատողներ, այն չի կրում մշտական բնույթ (օրինակ, գյուղացիական տնտեսություն վարող անձը սեզոնային աշխատանքների համար կարող է որոշակի աշխատանքներ կատարելու համար խիստ կարճ ժամանակով ներգրավել վարձու աշխատուժ):

- Եթե սեփական գործ ունեցող քաղաքացին աշխատում է առանց վարձու աշխատանքի ներգրավման և նրա հետ աշխատում են միայն ընտանիքի անդամները, որոնց համար սահմանված չէ աշխատավարձ, ապա նա համարվում է ինքնազբաղված:

- Եթե հարցվողն անհատական հիմունքներով մասնավոր անձի տնտեսությունում **մատուցել է միանգամյա կամ ոչ կանոնավոր բնույթ** կրող ծառայություններ՝ բնակարանի մաքրություն, առողջապահական, բժշկական ծառայություններ, շինարարական կամ այլ ծառայություններ, սպա զբաղվածության կարգավիճակը նշել՝ «ինքնազբաղված՝ այլ գործունեությամբ»:

▪ **Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամն** անձն է, ով **օժանդակելու, օգնելու** նպատակով աշխատում է ընտանիքի կամ S/S անդամին (ազգականին, բարեկամին) պատկանող ընտանեկան կազմակերպությունում (տնտեսությունում), **չի ստանում** դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում, զբաղվում է միևնույն գործունեությամբ, ինչ ընտանեկան կազմակերպությունը (տնտեսությունը) ղեկավարող ինքնազբաղված կամ գործատու S/S անդամը, ում հետ **չի կարող համարվել գործընկեր**՝ ելնելով **սովորաբար** ծախսած / աշխատած ժամերի քանակից:

- Եթե **SS ինքնազբաղված անդամի հետ միևնույն գործունեությամբ զբաղված ընտանիքի օգնող, օժանդակող մյուս անդամի կողմից սովորաբար** ծախսած / աշխատած ժամերի քանակն **էսպես չի տարբերվում, հավասար է կամ նույնիսկ գերազանցում է** վերջինիս աշխատած ժամերը, նա նույնպես համարվում է ինքնազբաղված (կող «4» կամ «5»), այլ ոչ թե՝ առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ (կող «6»):

- S/S ինքնազբաղված / գործատու անդամի և առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամի գործունեության տեսակները պետք է լինեն նույնական, հակառակ դեպքում հարկ է վերանայել առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամի զբաղվածության կարգավիճակը:

- Եթե S/S անդամներից մեկը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, իսկ մյուսը՝ դաշտային և բոստանային մշակաբույսերի աճեցմամբ, երկուսի համար էլ զբաղվածության կարգավիճակը կնշվի «ինքնազբաղված՝ գյուղացիական տնտեսությունում»-ին համապատասխանող կողը՝ «4»:

- Եթե S/S անդամներից որևէ մեկի զբաղվածության կարգավիճակը նշվել է «առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամ», ապա S/S անդամներից գոնե մեկի զբաղվածության կարգավիճակը պետք է լինի «**գործատու**» կամ «**ինքնազբաղված**»:

▪ **Արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամն անձն է, ով կոոպերատիվի ակտիվ (աշխատող)** անդամ է, մյուս անդամների հետ հավասար իրավունքներով մասնակցում է արտադրության կազմակերպմանը, արտադրանքի իրացմանը, կազմակերպության եկամուտների բաշխման հետ կապված հարցերի լուծմանը:

Կոոպերատիվում վարձու աշխատանքով զբաղված անձը չի համարվում արտադրական / սպառողական կոոպերատիվի անդամ:

▪ Դ9.-ի նպատակն է պարզել հարցվողի ներկա աշխատանքում օրենսդրությամբ սահմանված և (կամ) գործատուի կողմից տրվող սոցիալական երաշխիքներից և արտոնություններից օգտվելու փաստերը և (կամ) **օգտվելու պոտենցիալ հնարավորությունները**:

▪ Թվարկված երաշխիքներից յուրաքանչյուրի համար պատասխանող անդամի սյան համապատասխան տողում **պարտադիր է** նշել հնարավոր երեք պատասխաններից որևէ մեկը:

▪ «Հղիության / մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ» և «երեխայի խնամքի հնարավորություններ» արտոնությունները պետք է նշել՝ անկախ հարցվողի սեռից և տարիքից:

▪ Դ13.-Դ13ա-ն վերաբերում են ոչ թե հետազոտվող շաբաթվա, այլ տվյալ երևույթին **առհասարակ բնորոշ** իրավիճակին:

▪ **Դ14.-**ում նշվում է հարցվողի աշխատանքից / գործունեությունից **վերջին ամսում** ստացած աշխատավարձի կամ եկամտի չափը, իսկ հետագոտվող շաբաթում աշխատանքից ժամանակավորապես բացակայողների դեպքում՝ **նախորդող ամսում** ստացածը:

▪ Դրամական աշխատավարձի չափը պետք է նշել առձեռն ստացվածը:

▪ Բնաիրային աշխատավարձի / եկամտի չափն անհրաժեշտ է գնահատել դրամական արժեքով՝ ելնելով տվյալ ժամանակատվածի շուկայական գներից:

▪ **Եթե ապրանքը / ծառայությունն իրացվել է, սակայն դեռևս չի փոխհատուցվել դրամական կամ բնաիրային տեսքով, պետք է նշել ակնկալվող գումարի չափը՝ այն ստանալու երաշխիքի առկայության դեպքում:**

▪ Աշխատավարձը / եկամուտը «դրամական» և «բնաիրային» տողերի դիմաց նշվում է «0» հետևյալ դեպքերում.

- վերջին ամսում տարբեր պատճառներով դրա բացակայության դեպքում, օրինակ՝ աշխատանքի նոր ընդունվելու կամ գործատուի ժամանակավորապես անվճարունակ լինելու դեպքում և այլն.

- առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամի դեպքում.

- սեփական բնակարանի, տան կամ սեփական բիզնեսի համար շինարարության, կապիտալ վերանորոգման դեպքում:

▪ **Դ16.-**ում նշվում է այն ժամանակահատվածը, որի համար ստացվել է (կամ ակնկալվում է ստանալ) **Դ14.-**ում կամ **Դ15.-**ում նշված աշխատավարձը/եկամուտը:

- *Եթե գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված հարցվողը, օրինակ՝ խաղող արտադրողը, հետագոտվող ժամանակահատվածում ամբողջությամբ իրացրել է բերքը և դրամական եկամուտը ստացել է միանվագ (նաև բնաիրային փոխանակումը), ապա պետք է ճշգրիտ նշի զբաղվածության այն ժամանակատվածը, որի ընթացքում ստեղծվել է արդյունքը, օրինակ՝ «վեց ամսվա»:*

- *Սեփական անասունի մսի վաճառքի դեպքում Դ16-ում տևողությունը հարկ է նշել ոչ թե վաճառքի պահի դրությամբ, այլ ներառելով անասունի խնամքի վրա ծախսված ժամանակահատվածը:*

- *Միաժամանակ տարբեր գործունեությունների արդյունքում ստացված եկամտի դեպքում Դ16-ում նշել այն տևողությունը, որի արդյունքում ապահովվել է եկամտի գերակշռող մասը:*

▪ **Դ18-ը** բնութագրում է հարցվողի ունեցած աշխատանքի/գործունեության կայունությունը՝ աշխատանքը մշտական է/անժամկետ, ժամանակավոր թե սեզոնային, պատահական է թե միանգամյա՝ կապված որոշակի պայմանների առկայության հետ:

▪ **Մշտական / անժամկետ** է համարվում այն աշխատանքը, որի ավարտի ժամկետ առկա չէ:

- *Եթե հարցվողն ունի աշխատանք, որն իրականացնում է պարբերաբար և նույն գործատուի մոտ, բայց ամսվա, եռամսյակի մեջ մեկ անգամ, ապա դա համարվում է մշտական աշխատանք: Օրինակ, եթե հարցվողը հաշվապահ է և եռամսյակը մեկ որևէ կազմակերպության համար կազմում է հաշվետվություններ, ապա նրա աշխատանքը համարվում է մշտական:*

- *Փորձաշրջանում գտնվող հարցվողի աշխատանքը համարվում է մշտական, եթե դրա ավարտից հետո պայմանագիրն ավտոմատ չի դադարեցվում, հակառակ դեպքում այն համարվում է ժամանակավոր:*

▪ **Ժամանակավոր** է համարվում այն աշխատանքը, որի դեպքում.

- առկա է / սահմանված է աշխատանքի /գործունեության ավարտի ժամկետ.

- հարցվողը ժամանակավորապես փոխարինում է մշտական / անժամկետ պայմանագրով աշխատողին (օրինակ, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողին):

Այն դեպքում, երբ հարցվողի աշխատանքային պայմանագիրը գործատուն պարբերաբար նորացնում է, օրինակ՝ տարեկան մեկ անգամ, հարցվողն ինքը պետք է գնահատի՝ իր ունեցած աշխատանքը մշտական է, թե ժամանակավոր:

- **Սեզոնային է** համարվում այն աշխատանքը, որը բնակլիմայական պայմանների պատճառով կատարվում է ոչ թե ամբողջ տարին, այլ ութ ամիսը չգերազանցող ժամանակահատվածում:

- **Պատահական / միանգամյա** համարվում է այն աշխատանքը, որը **միաժամանակ բավարարում է հետևյալ երեք պայմաններին՝ կատարվում է պատվիրատուի առկայության դեպքում, իր բնույթով կանոնավոր չէ և կարող է տևել** ժամ(եր), օր(եր) (օրինակ, միայն տոն օրերին իրականացվող առևտուր, միանգամյա բնույթ կրող բեռնափոխադրում և այլն):

- **Ղ21.-ը** վերաբերում է ոչ թե հետազոտվող շաբաթվա, այլ **սովորաբար** (օրինակ՝ նախորդ մեկ ամսվա) **բնորոշ** իրավիճակին: Չկա հստակ սահմանում. հարցվողն ինքն է որոշում իր աշխատանքի բնույթն ըստ աշխատանքային օրվա տևողության:

ԲԱԺԻՆ Ե. ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՏԱՆՔ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս բաժնի հարցերի նպատակն է պարզել՝ հարցվողը հիմնական աշխատանքից զատ ունի՞ երկրորդ աշխատանք կամ եկամտաբեր այլ զբաղմունք:

- Երկրորդ աշխատանքը կարող է լինել մշտական, ժամանակավոր, սեզոնային հիմունքներով իրականացվող ցանկացած տեսակի համատեղություն, այլ աշխատանք պայմանագրով, պատահական, միանգամյա:

- Երկրորդ աշխատանք չեն համարվում հետևյալ դեպքերը.

- եթե հարցվողը հիմնական աշխատանքի հետ մեկտեղ կատարել է լրացուցիչ աշխատանք հիմնական աշխատանքային ժամերին և նույն գործատուի մոտ.

- հիմնական աշխատավայրի գործունեության բնույթով պայմանավորված աշխատանքը մի քանի կազմակերպություններում, օրինակ՝ գործուղումները:

Երկրորդ աշխատանք չի համարվում նաև աշխատանքը անձնական օժանդակ տնտեսությունում, եթե ստեղծված արդյունքը չի իրացվում տնտեսության սահմաններից դուրս:

- **Ե25.** հարցի համար տե՛ս սույն ցուցումների Ղ5.-ի ներքո տրված պարզաբանումը:

- **Ե26.** հարցի համար տե՛ս սույն ցուցումների Ղ6.-ի ներքո տրված տրված պարզաբանումը:

ԱՇԽԱՏԱԺԱՄԵՐ

- **Ե38.-ը** և **Ե39.-ը** վերաբերում են ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ՝ երկրորդ աշխատանքին / գործունեությանը:

- **Ե38.-ում** պետք է նշել հետազոտությանը նախորդող **վերջին ամսում սովորաբար** աշխատած **շաբաթական ժամերի քանակը:**

- **Ե39.-ում** պետք է նշել **հետազոտվող շաբաթվա ընթացքում փաստացի** աշխատած ժամերի քանակը: Եթե հարցվողը շաբաթվա ընթացքում հիմնական կամ երկրորդ աշխատանքում ոչ մի ժամ չի

աշխատել, ապա անհրաժեշտ է կատարել “0” նշում ժամերի համար հատկացված վանդակում և ստուգել Գ3-ում պատասխանի առկայությունը:

Ե39. հարցից հետո նշված պայմանները ստուգելուց հետո միայն կարելի է անցնել համապատասխան հարցին:

Ե47. Կարճաժամկետը՝ մասնագիտական դասընթաց, օրինակ՝ մատնահարդարում, հաշվապահություն, խոհարարություն, դիզայն, իսկ կրկնուսույցների մոտ պարապելը՝ նշել այլ-ում:

ԲԱԺԻՆ Զ. ԱՇԽԱՏԱՆՔ ԶՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

Այս բաժնի հարցերը տրվում են աշխատանք չունեցող անձանց և նպատակն է աշխատանք չունեցող և չփնտրող անձանց՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչությանը զատել գործազուրկներից:

- **Զ54.** հարցի համար տե՛ս սույն ցուցումների Դ5.-ի ներքո տրված տրված պարզաբանումը:
- **Զ55.** հարցի համար տե՛ս սույն ցուցումների Դ6.-ի ներքո տրված տրված պարզաբանումը:
- **Զ56.**-ում հարցվողի որակավորումը / մասնագիտությունը նշելիս **պետք է հիմնվել բացառապես կանոնավոր մասնագիտական կրթությամբ** (ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցմամբ) ձեռք բերված մասնագիտական որակավորումը: Վերջինիս բացակայության դեպքում՝ նշել «1»:

Ուսումը կիսատ թողած անձը չի համարվում մասնագիտական կանոնավոր կրթություն ունեցող: